ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1255-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱԳՆԵՍԱ ԱՎԴԼԼԱԶԻ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա և բ ենթակետերով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի ա ենթակետի և 2-րդ կետի ա ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ագնեսա Քոչինյանի 2026 թվականի հոկտեմբերի 08-ի հայտը՝ ***որոշում եմ***

1.Անհատ ձեռնարկատեր Ագնեսա Քոչինյանի /ՀՎՀՀ 66991862/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի 1 փողոց, 47 հասցեում (24քմ մակերեսով ոչ հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 4-րդ եռամսյակի (01.10.2026թ-31.12.2026թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

12 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1256-Ա

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ, 60-րդ հոդվածներով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կադաստրային քարտեզում 06-019-0011-0010 ծածկագրով անշարժ գույքը տեղադրվել է մոտավոր տեղադիրքով և սահմանային չափերով և չի համապատասխանում փաստացի տեղադիրքին և իրականությանը, հաշվի առնելով Անահիտ Մարտիկի Ջիլավյանի դիմումը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի ճշտված հատակագիծը և սահմանները՝ ***որոշում եմ***՝

1. Հաստատել Փամբակ համայնքի գ. Արջուտ, 23-րդ փողոց, 24 հողամաս հասցեում գտնվող՝ 06-019-0011-0010 կադաստրային ծածկագրով 0,08250 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

12 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1257-Ա

17.09.2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀՈՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՐՏԵՄ ՍԵՄԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, հիմք ընդունելով Արտեմ Սեմիկի Դավթյանի դիմումը, Փամբակ համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության եվ բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանի զեկուցագիրը այն մասին, որ աճուրդում հաղթող ճանաչված անձի հետ չի կնքվել պայմանագիր, քանի որ վերջինս հրաժարվել է պայմանագրի կնքումից, ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքում 17.09.2026թ-ին տեղի ունեցած աճուրդում հաղթող ճանաչված Արտեմ Սեմիկի Դավթյանի վճարած 3 338 000 դրամ գումարը, որը փոխանցվել է հողի օտարումից եկամուտներ հաշվեհամարին և 30000 դրամ գումարը, որը փոխանցվել է որպես անշարժ գույքի գնահատման որոշման արժեք հետ վերադարձնել վերջինիս (163018078291) հաշվեհամարին:

2. Աճուրդի որպես նախավճար վճարված գումարը հետ չի վերադարձվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

12 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1258-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-036-0064-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Եղեգնուտ, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 1-ին փակուղի, 6 բնակելի տուն փոստային հասցե:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

13 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1259-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-023-0064-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 3-րդ փողոց, 1-ին նրբանցք, 8 հողամաս փոստային հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

13 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1260-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, Հասատանի Հանրապետության կառավարության 2009թ. Հոկտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀԿԿ գույքի առանձին որակական քանակական բնութագրերի եվ դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ տրված ԱՏ-16092026-06-0632 տեղեկանքը, հաշվի առնելով հողամասի օգտագործման նպատակահարմարությունը՝ ***որոշում եմ***

Լոռու մարզի Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի 06-070-0289-0040 կադաստրային ծածկագրից 0.1984 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի խոտհարքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

14 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1261-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՍԵՆ ՌՈՒԲԵՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա. և բ. ենթակետերով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի և 2-րդ կետի բ. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արսեն Ավետիսյանի 2026 թվականի հոկտեմբերի 12-ի հայտը՝ որոշում եմ

1.Անհատ ձեռնարկատեր Արսեն Ռուբենի Ավետիսյանի /ՀՎՀՀ 66962507/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի 1 փողոց, 13 շեն հասցեում (30 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 4-րդ եռամսյակի (01.10.2026թ-31.12.2026թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

15 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1262-Ա

ԱՐՄԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԱՄԻ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոտոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ԱՐՄԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԱՄԻ 06/05/2026 թվականի դիմումը՝ որոշում եմ

1. Մելանյա Կորյունի Սարգսյանին ընդհանուր անհատական սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-023-0247-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հարկի հարկային պարտավորությունները վճարելուց և օտարումից հետո առաջացած 3607 (երեք հազար վեց հարյուր յոթ) դրամ գերավճարը հաշվանցել և մարել ԱՐՄԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԱՄԻ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0247-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հարկի գծով 2026-2027թթ-ի հարկային պարտավորությունները :
2. Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին՝ տասնօրյա ժամկետում իրականացնել գերավճարի հաշվանցման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

15 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1263-Ա

ԱԼԲԵՐՏ ՍԱՄՍՈՆԻ ՈՒԼԻԽԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, Լոռու մարզի Լոռի 9 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի Փամբակ գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Ալբերտ Սամսոնի Ուլիխանյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-107-0025-0050 ճշտված կադաստրային ծածկագրով 0,01073 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի արոտավայր հանդիսացող հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության պահին առկա կադաստրային արժեքի տարբերության համար հողամասի սեփականատեր Վլադիմիր Կարենի Էդարյանին պարտավորեցնել համայնքի բյուջե (հողի օտարումից եկամուտներ հաշվեհամար՝ 900235422137) վճարել 34535 ՀՀ դրամ (երեսունչորս հազար հինգ հարյուր երեսունհինգ):

3. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

15 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1264-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը վարձակալության տրամադրելու մասին 04 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 38 արձանագրությունը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքում 04 սեպտեմբերի 2026 թվականին անցկացված վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված Սամվել Արտյոմի Սարգսյանին վարձակալությամբ 25 տարի ժամկետով տրամադրել լոտ 38. 06-041-0281-0003 ծածկագրով 0,1288 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, 4-րդ կարգի վարելահող, մրցույթում առաջարկված առավելագույն գնով՝ տարեկան 5250 ՀՀ դրամով:

2.Սամվել Արտյոմի Սարգսյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերն իրականացնել Սամվել Արտյոմի Սարգսյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

15 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1265-Ա

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով սեփականության վկայականները, հաշվի առնելով Արմենակ Պետրոսի Քոչինյանի (ծնված 02.04.1985թ.) դիմումը.

որոշում եմ

1. Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ Արմենակ Պետրոսի Քոչինյանին սեփականության իրավունքով պատկանող 06-103-0062-0008 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության (սեփ. վկայական՝02022024-06-0021) 0.1593 հա մակերեսով հողամասը և 06-103-0062-0003 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբեկտների գործառնական նշանակության (սեփ. վկայական՝ 27042023-06-0029) 0.14765 հա հողամասը միավորել՝ որպես մեկ գույքային միավոր:

2. Միավորումից առաջացող անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, Վահագնի, Վանաձոր-Ալավերդի մայրուղի, 24-26կմ13/1 հողամաս. փոստային հասցե:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

15 հոկտեմբերի 2026
գ. Փամբակ